

Արձանագրուած Խօսքը

Կարդա՛
Հոովմայեցիս 15. 4-13

Որովհետեւ նախապէս
Գրուած ամէն ինչ՝
գրուեցաւ, որ մենք...
որպէս յոյս ունենանք՝
նամբերութեամբ ու
գիրքերուն
մխիթարութեամբ:
—Հոովմ. 15. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ
ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Ելից 27-28

■ Մատթէոս 21. 1-22

Խոր գնահատանք կը յայտնէր այդ նշանաւոր մարգիկին ըրածին համար, եւ թէ ինչպէս արձանագրուած խօսք մը կրնար այդքան մեծ զօրութիւն ունենալ:

Երբ նման գիր մը յարգուած մարգիկէ մը մեծ արժէք կրնայ ունենալ, որքա՛ն աւելի մեծ զօրութիւն ու արժէք կրնայ ունենալ Աստուծոյ Խօսքը՝ գրուած իր ստեղծած մարդուն համար: Առաքեալը կ'ըսէ.— «Որովհետեւ նախապէս գրուած ամէն ինչ՝ գրուեցաւ որ մենք սորվինք, որպէսզի յոյս ունենանք՝ համբերութեամբ ու գիրքերուն մխիթարութեամբ» (Հոովմ. 15. 4): Կեանք յեղաշրջող Աստուածաշունչի իմաստութեան մէջ, կայ անձնական պատգամ մը, որ կ'ըսէ, թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ, որ ըլլանք եւ ի՛նչ կ'ուզէ, որ ինք ըլլայ մեզի համար: Անիկա տուած է մեզի իր արձանագրուած Խօսքը, որպէսզի «յոյս ունենանք» երբ կը ստիպուինք դիմագրաւել կեանքի մեր հարցերը: Երախտագիտութեամբ կարդանք Աստուծոյ Խօսքը եւ հետեւինք անոր կեանք բարեփոխող զօրութեան:

**Աստուած կը խօսի իր Խօսքին միջոցով, բոլոր
անոնց, որոնք սրտով մտիկ կ'ընեն:**

Վերջերս հեռուստատեսի մար-
զական յայտագիր մը կը գովէր
նշանաւոր Ամերիկացի Ֆուլթայլիստ
մը, որ նշանակուած էր որպէս իր
խումբին ամենէն արժէքաւոր խաղ-
ցողը: Բայց ներկայացումը անոր
Ֆուլթայլի խաղարկութեան մասին
չէր: Հապա ըսուեցաւ, թէ տարիներէ
ի վեր, երբ ան տեսնէր իր հիացած
մարգիկներէն մէկը, որ հանգստեան
պիտի կոչուէր, ժամանակ կը տրա-
մադրէր երկտող մը գրելու եւ շնոր-
հաւորելու զայն, ոչ միայն անոր
սքանչելի խաղարկութեան համար,
այլ նաեւ անոր նկարագրին համար:
Իւրաքանչիւր անձ, որ նման գնա-
հատանքի գիր մը ստացած էր անկէ,

Ժամանակ Փոփոխութեան Համար

Կարդա՛
Ղուկաս 7. 37-49

Եթէ այս մարդը մարգարէ ըլլար, պիտի գիտնար թէ ո՞վ եւ ինչպիսի կից է իրեց դպչողը, որովհետեւ մեղաւոր է:
—Ղուկաս 7. 39

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ
■ Ելից 29-30
■ Մատթէոս 21. 23-46

ցանուէր: Նկատի ունենանք Ղուկաս 7-րդ գլխու դէպքը, երբ քաղաքին «մեղաւորը» կը մտնէր քաղաքին «սուրբին» տունը: Միմոն կոչուած Փարիսեցին, շատ չէր տպաւորուած այն մեղաւոր կնոջ շուայութենէն, որ ցուցաբերեց Յիսուսի հանդէպ: Յիսուս նկատելով Միմոնի ինքզինք արդարացնելու տրամադրութիւնը, բացատրելու համար իրողութիւնը, պատմեց իրեն երկու պարտապաններու պատմութիւնը – մէկը շատ պարտական էր իր տէրոջ, իսկ միւսը քիչ: «Հիմա ըսէ՛, անոնցմէ ո՞վ աւելի պիտի սիրէ զայն», հարցուց Յիսուս (Կ. 42): Յստակօրէն, ան՝ որուն շատ ներուեցաւ: Ակնարկելով Միմոնի ինքնահաւանութեան, Յիսուս ըսաւ.– «Ան՝ որուն քիչ կը ներուի, անիկա քիչ կը սիրէ» (Կ. 47):

Մարտահրաւէրը յստակ է: Որքան շատ մտատծենք, թէ բարի ենք, այնքան աւելի մեր սէրը Յիսուսի հանդէպ կը նուազի, քանի որ կը մոռնանք, թէ մենք ալ անոնցմէ ենք, որոնց «շատ ներուած է»: Եւ երբ այդ պատահի, պատրաստ ըլլանք կամ ոչ, ժամանակն է փոփոխութեան մը:

Բ արեկամս անգամ մը ըսաւ.– «Կեանքիս ընթացքին, շատ մը բաներ տեսած եմ, որ կը փոխուին, եւ ես այդ բոլոր փոփոխութեանց միշտ ալ հակառակ եղած եմ: Թերեւս բարեկամիս ըսածը չափազանցուած թուի, բայց որոշ է, որ շատեր չեն սիրեր փոփոխութիւնը, մանաւանդ երբ այդ կը վերագրուի մեր սովորութիւններուն եւ կեցուածքին:

Այդ պատճառ մըն էր, որ Յիսուս շատ ժողովրդականութիւն չգտաւ Փարիսեցիներուն քով: Ան ասպարէզ կարդաց անոնց երկար ատեն՝ աւանդութիւն դարձած կրօնական կեանքի դրութեան դէմ, ուր բարեգործութեամբ արդարանալ կ'ուսուցանուէր:

Երբ Աստուած կը սկսի բաներ փոխել, Ան ընդհանրապէս կը սկսի մեզ փոխելով:

Ես Ի՞նչ Պիտի Ընեմ

Կարդա՛
Յակոբ 1. 21-25

Խօսքը գործադրողներ
եղէք, եւ ոչ թէ միայն
լսողներ, դուք ձեզ
խաբելով:
—Յակոբ 1. 22

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ելից 31-33

■ Մատթէոս 22. 1-22

Բարձր գիտելիքներով լեցնեն իրենց միտքերը: Յաճախ շատ կը խօսինք հրաշալի իրողութեանց մասին, եւ կը մոռնանք, թէ պէտք է զանոնք ցոյց տանք մեր ապրած ամէնօրեայ կեանքով: Կրնայ պատահիլ, որ երբեմն սխալինք երբ ճշմարտութիւնը ցոյց կու տանք՝ ճշմարտութեան սիրոյն միայն, խաբելով մենք մեզ, թէ քանի կրնանք բացատրել իրողութիւնները, նաեւ կ'ապրինք ալ զանոնք»:

Յակոբոս Առաքեալ կը յիշեցնէ, թէ այն անձը, «որ ակնկառոյց կը նայի ազատութան կատարեալ օրէնքին ու կը կենայ անոր մէջ, — ոչ թէ մոռացկոտ լսող մը ըլլալով, հապա գործը կատարող մը, — անիկա երանելի պիտի ըլլայ իր ըրածին մէջ» (1. 25):

Հիմնական հարցը ինչ քարոզուիլը կամ ինչ գրուած ըլլալը չէ, այլ ինչ գործադրուիլն է: Երբ Աստուծոյ Խօսքը կը սերտենք, մեր առաջին հարցումը պէտք չէ ըլլայ, «ի՞նչ է իմ կարծիքս այս ըսուածին հանդէպ», այլ «ինչպէ՞ս կրնամ զայն գործադրել ամէնօրեայ կեանքիս մէջ»:

**ՄԷԿ Քայլ յառաջ՝ հնագանդութեան մէջ, աւելի կ'արժէ
քան տարիներու սերտողութիւնը այդ մասին:**

Երկար տարիներու բարեկամս, որ եղած է խորհրդատուս, յաճախ կ'ըսէ ինծի, թէ Աստուածաշունչը սերտելու իր նպատակը ընդհարնապէս զայն իր անձնական կեանքին մէջ կիրարկելու համար եղած է: Կը գնահատեմ իր սորվածը գործադրութեան դնելու այդ շեշտը, որովհետեւ դիւրին է սերտել Աստուծոյ Խօսքը, վիճաբանիլ, ուսուցանել եւ երբեմն ալ գրել անոր մասին, այլ խօսքով, մտաւորական մօտեցում ունենալ, եւ սակայն բնաւ չմտածել զայն կիրարկելու մասին:

Օգվալտ Չէյմպլըզ ըսած է. — «Հաւատացեալներ յաճախ սխալ ընթացքի մէջ կ'ըլլան, երբ շատ

Արժէքներու Հարց Մը

Կարդա՛
Կողոսացիս 3. 1-11

Մտածեցէ՛ք վերի
բաներուն մասին, ոչ թէ
երկրի վրայ եղող
բաներուն մասին:
— Կողոսացիս 3. 2

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱՒԿ
ՏԱՐՈՒՆ ԱՒԶ
■ Ելից 34-35
■ Մատթէոս 22. 23-46

Յիսուսի հետեւորդին համար, արժէքներ աւելի կարեւոր կը նկատուին: Երբ Առաքեալը գրեց Կողոսայի հաւատացեալներուն, ըսաւ.— «Մտածեցէ՛ք վերի բաներուն մասին, ոչ թէ երկրի վրայ եղող բաներուն մասին» (Կող. 3. 2): Իր տեսակէտը այն էր, թէ երբ կ'արժեւորենք երկնային արժէքները եւ անոնցմէ մղուած կը գործենք, աւելի ազդեցիկ դեռապաններ կ'ըլլանք Քրիստոսի: Երբ կը գիտակցինք, որ մենք ուխտաւորներ ենք այս աշխարհի վրայ, եւ ոչ թէ գբօսաշրջիկներ, մեր հեռանկարը պիտի ըլլայ աւելի յստակ, եւ մեր ծառայութիւնը Քրիստոսի՝ աւելի ազդեցիկ:

Կ'ըսուի թէ, կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր մարդիկ գիտեն ամէն բանի գինը եւ սակայն ոչ՝ արժէքը: Այս աշխարհի «հոս եւ հիմա»յին դիմաց, որպէս Յիսուսի հետեւորդներ, կանչուած ենք մեր արժէքները դնելու այն բաներուն վրայ, որոնք յաւիտենական են: Այլ խօսքով, Առաջնորդի Մը Արժէքը Ուղղակի Համեմատական է այդ Առաջնորդին Արժէքներուն:

Օր մը երբ Շիքակօ կը գտնուէի, նկատեցի ցուցատախտակ մը, որ կը ծանուցանէր առեւտրական գիտածողով մը: Այդ ծանուցումին պատգամը երկդէմի բան մը ունէր.— Առաջնորդի Մը Արժէքը Ուղղակի Համեմատական է Այդ Առաջնորդին Արժէքներուն: Այն բաներուն, որոնց արժէք կու տանք, անոնք են, որ կը ձեւաւորեն մեր նկարագիրը եւ ի վերջոյ այդ արժէքներն են, որ պիտի սահմանեն, թէ մենք որքան կրնանք առաջնորդել, կամ բնաւ կրնա՞նք առաջնորդել: Այսուհանդերձ, այս սկզբունքը կիրարկելի ճշմարտութիւն մը չէ միայն առաջնորդներու պարագային:

Ամուր պէտք է բռնել այն, ինչ որ յաւիտենական է, եւ շատ քեթեւ, այն՝ ինչ որ ժամանակաւոր:

Ծառի Մը Նման

Կարդա՛
Եփեսացիս 4. 11-16

Անիկա ջորի
առուներուն քով
տնկուած ծառի պէս
պիտի ըլլայ:
—Սաղմոս 1. 3

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ
■ Ելից 36-38
■ Մատթէոս 23. 1-22

Երբեմն կը լսեմ կարգ մը մարդոցմէ, որոնք ժամանակին իմ հովուած եկեղեցիիս անդամները եղած են: Ի՛նչ մեծ ուրախութիւն է ինծի համար տեսնել զանոնք հասունցած եւ մեծապէս օգտակար ծառայողներ դարձած Աստուծոյ գործին մէջ՝ ալ առանց իմ օգնութեանս կարիքը ունենալու: Ասիկա ինծի ուրախութեամբ կը յիշեցնէ, որ ես կը տնկեմ եւ ժամանակի մը համար կը ջրեմ, օգնելով որ անոնք ամէն բանի մէջ աճին՝ Անով որ գլուխն է (Եփես. 4. 15: Բայց միայն Աստուած կ'աճեցնէ զանոնք (Ա. Կոր. 3. 6-7):

Գերմանացի Աստուածաբան մը ըսած է. — «Այն մարդը որ չի գիտեր թող տալ, ան որ չի ճանչնար այն խաղաղութիւնը եւ ուրախութիւնը որ կուգայ Անկէ՝ որ իր նպատակը կ'իրագործէ առանց մեզի, Ան՝ որ ծառը կ'աճեցնէ... Այդ մարդը ոչինչ պիտի ըլլայ բացի խղճալի արարած մը ըլլալէ իր ձեր տարիքին»: Ուրեմն, իմ տարիքիս, թերեւս ունենամ տունկ մը կամ երկու խնամելու, բայց ամէն բանէ աւելի, պիտի հետեւին անոնց աճելուն:

ԱՆՈՆՔ ՈՐՈՆՔ ԻՍԿԱՊԷՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՐ ԻԵՏԵԼԻՑ,
ԿՕՁԱՆՑ ՈՒՐԻՉՆԵՐՈՒՑ ԱՂ, ՈՐ ԻԵՏԵԼԻՑ ԻՐԵՑ:

Չարլիին Քալելը Լուսինի Վրայ

Կարդա՛
Ծննդոց 5. 21-32

Ենովք Աստուծոյ հետ
քալեց, եւ չէր գիտեր,
քանի որ Աստուած զինք
առաւ:

— ԾՆՆԴՈՅ 5. 24

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Ելից 39-40

■ Մատթէոս 23. 23-39

Այդ սերտողութեան աւարտին Չարլի աղօթեց Յիսուսի եւ ըսաւ. — «Ես իմ կեանքս քեզի կու տամ, եւ եթէ դուն իրական ես, եկուր իմ կեանքիս մէջ»: Այս աղօթքէն ետք Չարլի ներքին անբացատրելի խաղաղութեան մը փորձառութիւնը ունեցաւ: Այդ փորձառութիւնը այնքան խորունկ էր, որ ան սկսաւ անոր մասին պատմել նաեւ ուրիշներու: Չարլի կ'ըսէ. — «Իմ լուսնի վրայ քալելս տեւեց 3 օրեր, եւ այդ մէկը մեծ արկածախնդրութիւն մըն էր: Սակայն, իմ Աստուծոյ Հետ քալելը պիտի տեւէ յաւիտենապէս»:

Աստուածաշունչը մեզի կը պատմէ ուրիշ մարդու մը մասին, որ քալեց Աստուծոյ Հետ: «Ենովք Աստուծոյ Հետ քալեց եւ չէր գտնուեր, քանի որ Աստուած զինք առաւ» (Ծննդ. 5. 24): Անոր Հոգեւոր քալելը Աստուծոյ Հետ այնքան մօտէն էր, որ Աստուած զինք ուղղակի առաւ յաւիտենականութեան մէջ (Տես Եբր. 11. 5): Հաւատացեալներուն Համար Հարց չէ, թէ ճամբորդութիւնը ուր կը տանի: Մեր քալելը Աստուծոյ Հետ պիտի տեւէ յաւիտենապէս:

Յաւիտենականութիւնը որպէս Ապստակ ունեւալով, ամէն օր քալեմք Աստուծոյ լոյսին մէջ:

Լուսնի Շուքին Տակ խորագրով վաւերագրական գիրքը կը պատմէ աստղանաւորդ Չարլի Տիւքի մասին, որ Աբօլօ 16 անջրպետանաւով Լուսին գնաց 1972-ին: Մինչ անջրպետանաւը լուսնի ծիրին մէջ կը դառնար, Տիւք եւ ուրիշ աստղանաւորդ մը ոտք դրին լուսնի մակերեսին վրայ: Երեք օրերու փորձերէ եւ բաւական լուսնային քարեր հաւաքելէ ետք, անջրպետանաւը ապահով վերադարձաւ երկիր:

Ետքը Չարլի Հոգեւոր այլափոխութիւն մը ունեցաւ: Ան կ'ըսէ, թէ այդ փոփոխութիւնը սկսաւ, երբ բարեկամ մը, օր մը զինք Սուրբ Գիրքի սերտողութեան մը տարաւ:

Մտացիր Եղած

Կարդա՛
Ղուկաս 10. 38-41

Բայց Մարթա շատ
զբաղած էր սպասար-
կութեամբ:
—Ղուկաս 10. 40

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Ղեկուպետոս 1-3
- Մատթէոս 24. 1-28

պահուն: Հարցը այն է, թէ անոնք նոյն ժամանակ իրենց դասընկերներուն հետ կը հաղորդակցին համակարգիչի միջոցով կամ հետաքրքրական այլ բաներ կը գտնեն համացանցին վրայ եւ անոնցմով կը զբաղին: Այդ փոքր համակարգիչները կը կորսնցնեն իրենց արժէքը եւ կը ստեղծեն մտացիրութիւն, նոյնիսկ եթէ աշակերտները դրական աշխատանքի մէջ ըլլան:

Լաւ բաներ յաճախ կը շեղեն մեր ուշադրութիւնը այն բանէն, որուն պէտք է ուշադրութիւն դարձնենք: Ասիկա իրականութիւն էր Մարթային համար: Ղուկաս 10. 40 համարը կ'ըսէ. — «Բայց Մարթա շատ զբաղուած էր սպասարկութեամբ» եւ այդ զինք հեռու պահած էր Յիսուսի հետ ժամանակ անցընելէ: Նոյն ձեւով, լաւ նախապիտութիւն մը կրնայ ինքն իրմով արժէք ունենալ: Սակայն, եթէ այդ նախապիտութիւնը քեզ հեռու պահէ քու ընտանեկան պատասխանատուութիւններէն կամ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութենէն, պէտք է զայն փոփոխութեան ենթարկել:

Մենք ստեղծուած ենք գԱստուած փառաբանելու համար:

Այն համալսարանը, ուր ես կ'ուսուցանեմ որպէս օգնական դասախօս, իւրաքանչիւր աշակերտին կը տրամադրէ համակարգիչ մը: Թէեւ այդ դրութիւնը օգտակար կրնայ ըլլալ աշակերտներուն շատ մը ձեւերով, սակայն, ես նկատեցի նաեւ, թէ կրնար նաեւ արգելք դառնալ անոնց սորվելուն: Այդ փոքր համակարգիչները կրնան պատճառ դառնալ աշակերտներուն մտացիր ըլլալու դասի պահերուն:

Քանի որ աշակերտները իրենց դասերուն նօթերը կ'առնեն այդ փոքր համակարգիչներուն վրայ, անոնք բաց կը պահեն զանոնք իրենց գրասեղանին վրայ՝ դասի ժամանակներուն հետ կը հաղորդակցին համակարգիչի միջոցով կամ հետաքրքրական այլ բաներ կը գտնեն համացանցին վրայ եւ անոնցմով կը զբաղին: Այդ փոքր համակարգիչները կը կորսնցնեն իրենց արժէքը եւ կը ստեղծեն մտացիրութիւն, նոյնիսկ եթէ աշակերտները դրական աշխատանքի մէջ ըլլան:

Գովարանել Ռանդաղութիւնը

Կարդա՛
Բ. Պետրոս 3. 1-9

Տէրը չուշացներ Իր
խոստումը, ինչպէս
ոմանք ուշացուցած կը
սեպեն:

—Բ. Պետրոս 3. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ղեկավար 4-5

■ Մատթէոս 24. 29-51

Ըստ Աստուածաշունչին, ան շիտակ է: Պետրոս Առաքեալ
կը զգուշացնէ հաւատացեալները ըսելով, թէ վերջին օրերը
մարդիկ պիտի սկսին կասկածիլ Աստուծոյ, որովհետեւ
Ան շատ դանդաղ պիտի թուի երեւալ իրենց, Իր վերադարձի
խոստումը յարգելուն մէջ: Պետրոս ցոյց կու տայ, թէ այդ
երեւցող դանդաղութիւնը լաւ բան մըն է: Այդ ուշացումով
Աստուած կը յայտնաբերէ Իր համբերութիւնը, աւելի
ժամանակ տալով մարդոց, որ ապաշխարեն (Բ. Պետ. 3. 9)
եւ հաւատարիմ ըլլալով Իր նկարագրին՝ ըլլալու համբերող
կամ դանդաղ բարկութեան (Ելից 34. 6):

Մենք ալ պէտք է դանդաղ ըլլանք բարկանալու մէջ եւ
դանդաղ խօսելու մէջ (Յակոբ 1. 19): Ըստ Յակոբոս Առաքե-
ալին, «արագութիւնը» պէտք է վերապահենք մեր ականջ-
ներուն: Պէտք է արագ ըլլանք մտիկ ընելու մէջ:

Մեր վազքին մէջ, յաճախ նպատակներ իրագործելու եւ
ժամկէտներու հասնելու համար, յիշենք արագացնել մեր
լսելը, եւ դանդաղեցնել մեր բարկութիւններն ու լեզուները:

Երբ փորձուիս բարկութիւնդ կորսնցնել անձի մը հանդէպ,
յիշէ որքան Աստուած համբերող է քեզի հանդէպ:

Աստուած Եւ Դիպուածներ

Կարդա՛
Եբրայեցիս 11. 1-10

Ամէն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտուցէք ձեր խնդրանքները Աստուծոյ:
—Փիլիպպեցիս 4. 6

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ
ՏԱՐՈՒՆ ԱՄՔ
■ Ղեկապետ 6-7
■ Մատթէոս 25. 1-30

միջոցները - բնութիւն, Աստուածաշունչ, Տէրունական Ընթրիք, Եկեղեցի, ուրիշ մարդիկ - բոլորն ալ շօշափելի բաներ են, որոնց կրնանք դաչիլ: Սակայն, Աստուծոյ Ինքնուրոյն էութիւնը հոգեկան է: Աղօթքը կ'արտացոլացնէ այդ տարբերութիւնը մեր եւ Աստուծոյ միջեւ:

Թէեւ կրնանք աղօթել եւ խնդրել Աստուծամէ, որ ուղղակի միջամուխ ըլլայ հարցի մը, պէտք չէ զարմանանք, եթէ Ան պատասխանէ մեզի թաքնուած ձեւով՝ մեր առած որոշումներուն միջոցով: Օրինակ, գինեմոլ մը կ'աղօթէ.- «Ո՛վ Տէր, գիտ հեռու պահէ խմելէ՛ այսօր»: Այդ աղօթքին պատասխանը շատ հաւանաբար պիտի գայ ներսէն, կարծր որոշումով մը, կամ հաւատարիմ բարեկամի մը օգնութեան աղերսանքով, եւ ոչ թէ հրաշքով մը ալքուլի շիշերը մոզական ձեւով պիտի անհետանան իրենց գտնուած տեղէն:

Աստուած Իր գերբնական միջոցներով միջամուխ ըլլայ կամ հնազանդելու զօրութիւնը տայ կամ ոչ, մենք պէտք վատահինք եւ հաւատանք Անոր անմիջական գործակցութեան:

Նախախնամութեան բնական ընթացքով, Աստուած կը գործէ ստեղծագործութեան մէջ եւ անոր միջոցով, եւ ոչ թէ հակառակ ձեւով: Ասոր համար, կարգ մը աղօթքներու շիտակ պատասխանները ստուգելը բաւական դժուար կ'ըլլայ:

«Միայն հաւատքն է, որ կը հաստատէ կապակցութիւնը, ոչ մէկ փորձառական փաստ կրնայ հաստատել զայն», կ'ըսէ Անգլիացի աստուածաբան Ս. Լէուիզ: Մենք կը հաւատանք, թէ աղօթք մը կը պատասխանուի, ոչ թէ անոր համար, որ գիտական չափանիշով փաստած ենք, հապա քանի որ հաւատք ունինք:

Աստուծոյ հանդիպելու շատ մը

Աղօթելու կարելոր մէկ մասը յօժարիլն է
պատասխանին մէկ բաժինը ըլլալու:

Հարստանալ Աստուծոմով

Կարդա՛
Ղուկաս 12. 13-21

Որովհետև ուր որ է
ձեր գանձը, ունի պիտի
ըլլայ նաև ձեր սիրտը:
— Ղուկաս 12. 34

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ
ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ղեկավարող 8-10

■ Մատթեոս 25. 31-46

մերժեց միջամուխ ըլլալ, բայց նկատելով մարդուն այդ ժառանգութեան հարցը մէջտեղ դնելու շարժառիթը, ցոյց տուաւ անոր նման կեցուածքի մը վնասակար հետեւանքները: Անոր համար ըսաւ.— «Ուշադիր եղէք եւ զգուշացէ՛ք ազահուլութենէ, որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը» (Ղուկ. 12. 15):

Յետոյ Յիսուս պատմեց մարդու մը առակը, որուն արտերը առատ բերք տուած էին եւ ան կը ծրագրէր, թէ ինչպէս պիտի ամբարէր եւ ուրախանար: Յիսուս եզրակացնելով կ'ըսէ.— «Բայց Աստուած ըսաւ անոր,— Անմիտ, այս գիշեր հողիդ պիտի պահանջուի քեզմէ, ուստի որո՞ւն պիտի ըլլան այս պատրաստած բաներդ': Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ քով» (Կ. 20-21): Ազահուլութիւնը այդպէս է: Ի վերջոյ հարստութիւնը պիտի երթայ, բայց աւելի գէշը, մենք պիտի երթանք: Լաւ է երկինքը դիզել մեր գանձերը, շահարկել հողեւոր հարստութեամբ եւ «հարստանալ Աստուծոմով»:

Մեր իսկական հարստութիւնը այն է՝ ինչ որ կը շահարկենք յաւիտեանակամութեան համար:

Կը հետեւիմ սակարանի ելեւէջի լուրերուն եւ կը մտածեմ մարդոց վրայ անոր թողուցած վախի եւ ազահուլութեան զգացումներուն մասին: 1980-ին լոյս տեսած ֆիլմի մը դերակատարը սա փիլիսոփայուլ-թիւնը կ'արտայայտէ.— «Ազահուլութիւն, զինք փոխարինող աւելի լաւ բառ մը չկայ: Ազահուլութիւնը շիտակ է, գործնական է... Ազահուլութիւնը պիտի փրկէ... Միացեալ Նահանգները»: Ի՞նչ յիմարական մտածում:

Կը յիշեմ այն մարդը, որ Յիսուսի մօտենալով խնդրեց իրմէ, որ միջամտէ, որպէսզի իր եղբայրը՝ իրենց հօրը ժառանգը արդարօրէն բաժնէ իրենց միջեւ: Յիսուս թէեւ

Հաւատքի Պատերազմը

Կարդա՛
Ա. Տիմոթէոս 6. 11-16

Պատերազմէ՛
նաւատքին բարի
պատերազմը:
—Ա. Տիմոթէոս 6. 12

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱՒԿ
ՏԱՐՈՒՆ ԱՒԶ
■ Ղեկավարող 11-12
■ Մատթէոս 26. 1-25

ու արժէքը, անոր բերած քաղաքակրթութիւնն ու օրհնութիւնները, լաւապէս ըմբռնած ըլլալով, զայն կորսնցնելը իրենց համար կենաց եւ մահու հարց նկատեցին: Անոնք ամէն տեսակի զոհողութիւններ յանձն առին: Գիտնալով թշնամիին ահաւոր ըլլալը, կրցան քաջաբար անոր սպառնալիքներուն պատասխանել ըսելով.— «Այս հաւատքէն ոչ ո՛ք կրնայ խախտել մեզ... ոչ սուրը եւ ոչ հուրը...»

Թշնամիին սպառնալիքներուն դէմ ուղղուած այս քաջարի պատասխանը, արձագանգն էր Պօղոս Առաքեալի այն խօսքին, որ կ'ըսէ.— «Ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն...» (Հռովմ. 8. 35): Վարդանանք պատերազմեցան ինքնապաշտպանութեան հաւատքի բարի պատերազմը: Եւ այդ հաւատքի պատերազմը կրցաւ յաղթել աշխարհին, դարեր շարունակ: Փաստ՝ մեր այսօրուայ գոյութիւնը որպէս Հայ Քրիստոնեայ ազգ: Այսօր եւ միշտ պէտք է շարունակենք հաւատքի այդ բարի պատերազմը, կարենալ շարունակելու Հայ հաւատացեալի մեր ինքնութիւնը:

Քրիստոնէական հաւատքը լաւագոյն գրահն է գոյատեւման պայքարին մէջ:

Վարդանանց պատերազմը կը նկատուի մեր պատմութեան ամենէն բախտորոշ եւ ճակատագրական դէպքը: Եթէ կրցանք դարերու ընթացքին մեր գոյութեան սպառնացող անհամար փոթորիկներու մէջէն անցնիլ եւ շարունակել մեր գոյութիւնը որպէս ազգ, զայն կը պարտինք Վարդանանց մեր նախնիքներուն, որոնք քրիստոնէական իրենց հաւատքը պաշտպանելու եւ պահելու համար ծառայեցան Պարսիկ Յազկերտ Բ. թագաւորին ամէն տեսակի սպառնալիքներուն դէմ:

Հինգերորդ դարու մեր նախնիքները՝ Վարդանանց այդ սերունդը, քրիստոնէական հաւատքի իմաստն

Ղրկեցէ՛ք Լոյսը

Կարդա՛
Փիլիպպեցիս 2. 12-18

Որպէսզի ըլլաք անմեղադրելի ու անցեցք, Աստուծոյ անարատ զաւակներ՝ կամակոր ու խոտորեալ սերունդի մը մէջ: Դուք կը փայլիք անոնց մէջ, որպէս լուսաւորներ աշխարհի մէջ: —Փիլիպ. 2. 15

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Ղեկապետ 13

■ Մատթէոս 26. 26-50

Խաւարին եւ լոյսին հակադրութիւնը ուշագրաւ երեւոյթ է Աստուածաշունչի ներկայացման մէջ, երբ Յիսուս՝ Մեսիան, նիւթ կը դառնայ: «Խաւարի մէջ քալող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, մահուան շուքին երկիրը բնակողներուն վրայ լոյս ծագեցաւ» (Եսայի 9. 2) կ'ըսէ մարգարէն: Իսկ Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ.— «Կեանքը անով (Քրիստոսով) էր, ու կեանքը մարդոց լոյս էր. լոյսը կը փայլէր խաւարի մէջ, բայց խաւարը չճանչցաւ զայն» (Յովհ. 1. 4-5):

Մեր առանձնաշնորհումն է՝ որպէս Յիսուսի հետեւորդներ, իր լոյսը կրողներ ըլլալ: Պօղոս Առաքեալ կը պատուիրէ Փիլիպպեցիներուն, որ ըլլան «Անմեղադրելի ու աննենգ, Աստուծոյ անարատ զաւակներ՝ կամակոր ու խոտորեալ սերունդի մը մէջ: Դուք կը փայլիք անոնց մէջ՝ որպէս լուսաւորներ աշխարհի մէջ» (Փիլիպ. 2. 15): Փոխանակ վախնալու կամ ճնշուած զգալու մեր շուրջը գտնուող հոգեւոր խաւարէն, վստահինք Աստուծոյ շնորհքին, որ իր զաւակներուն կողմէն տայ իրեն համար փայլելու լոյսը:

Յիսուս եկաւ լոյս տալու համար խաւար
աշխարհի մը:

Ա մերիկացի առեւտրական մը 25,000 տոլար կը ծախսէ արտադրելու համար աւելի մատչելի գինով արեգակնային լոյսի դրութիւն մը, որպէսզի կարելի ըլլայ Ափրիկեան գաղթականներու մէջ ապրող հազարաւոր մարդոց աւելի աժան գինով լոյս հայթայթել: Մէկ օրուայ արեգակնային էլեքտրակաշնութիւն լեցնելը, եօթը ժամեր չարունակ լոյս կ'արտադրէ մարդոց՝ իրենց տուններուն, դպրոցներուն եւ բժշկական դարմանատուններուն համար, զանոնք փրկելով մթութենէ, ուր յաճախ գողութիւններ եւ ոճիրներ տեղի կ'ունենային:

Վերամիացման Ճաշկերոյթ

Կարդա՛
Յայտնութիւն 19. 1-9

Երանի անոնց որ
հրաւիրուած են
գառնուկից հարսանիքի
ընթրիքին:
—Յայտնութիւն 19. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ
■ Ղեկավար 14
■ Մատթէոս 26. 51-75

Աստուածաշունչը մեզի կը խօսի աւելի կարեւոր վերամիացումի ճաշկերոյթի մը մասին՝ երկինքի մէջ: Յայտ. 19. 9 համարը զայն կը կոչէ «Քառնուկի հարսանիքի ընթրիք»: Ոչ նման լուսնային նոր տարուայ վերամիացման ճաշկերոյթին, ոչ ոք գիտէ թուականը այդ երկնային հարսանիքին, բացի Աստուծմէ (Մատթ. 24. 36): Ոչ ալ մենք պէտք ունինք մտահոգուելու ճամբորդական կարգադրութիւններ ընելու համար:

Որո՞նք հրաւիրուած են այդ երկնային վերամիացման ճաշկերոյթին: Բոլոր անոնք, որոնք Աստուծոյ ընտանիքին կը պատկանին, հոն պիտի ըլլան.— «Անոնք որ ընդունեցին Զինք (Յիսուսը), անոնք որ կը հաւատան Իր անունին... Անոնք ոչ արիւնէն եւ ոչ մարմինի կամքէն ծնան, ոչ ալ մարդու կամքէն, հապա՛ Աստուծմէ» (Յովհ. 1. 12-13):

Ներկայ պիտի ըլլա՞ս երկնային այդ վերամիացման ճաշկերոյթին: Կրնաս տեղդ ապահովել հիմա՛ վստահելով Յիսուսի եւ ընդունելով Զայն որպէս Տէրդ ու Փրկիչդ:

Հաւատալ Քրիստոսի, կը Աշտնակէ փրկութիւնը
ստացած եւ երկինքը ապահոված:

Շատ մը Չինացիներ, ընտանեօք երկար կը ճամբորդեն, ներկայ գտնուելու աւանդական տարեկան վերամիացման ճաշկերոյթի մը, որ տեղի կ'ունենայ լուսնային նոր տարիի գիշերը: Ընդհանրապէս անոնք կը հաւաքուին իրենց ծնողներու կամ ընտանիքի ամենամեծ զաւակին տունը:

Չինացիներ, որոնք իրենց երկրէն դուրս կ'ապրին, պէտք է շատ կանուխէն իրենց օդանաւի կամ պասի տոմսերը ապահովեն: Ուշ մնացողներ կրնան տոմս չգտնել եւ ձախողիլ ներկայ գտնուելու իրենց ընտանեկան այդ վերամիացման աւանդական ճաշկերոյթին:

Իսկական Սէր Ցոյց Տալ

Կարդա՛
Յովհ. 13. 1-5, 33-35

Ասով բոլորը պիտի
գիտնան, թէ դուք իմ
աշակերտներս էք, եթէ
սէր ունենաք իրարու
նահելայ:
—Յովհ. 13. 35

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ղեկավարող 15-16

■ Մատթէոս 27. 1-26

Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, պատուիրեց իր աշակերտներուն, որ «սիրեն զիրար», որովհետեւ այդպէս ընելով, «բոլորը պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք, եթէ սէր ունենաք իրարու հանդէպ» (Յովհ. 13 34-35):

Այն սէրը, որ մեր Տէրը կ'ուզէ որ իր աշակերտները ունենան իրարու հանդէպ, կը տարբերի այն ռոմանթիկ սէրէն, որ կը յայտնուի գոյգերու միջեւ կամ այն եղբայրական սէրէն, որ կը յայտնուի բարեկամներու կամ ընտանիքի անդամներու միջեւ: Անիկա ոչ անձնասիրական սէր է՝ այլ Յունարէն Ակաբէ բառը, որ Յովհաննէս Առաքեալ կը գործածէ: Աստուածային սէր մը, որ փոխարէնը ոչ ինչ կ'ակնկալէ: Այդ տեսակի սէրն էր, որ Յիսուս ցոյց տուաւ իր աշակերտներուն, երբ «ջուր լեցնելով կոնկքին մէջ, սկսաւ իր աշակերտներուն ոտքերը լուալ» (Կ. 5): Այդ նոյն սէրն էր, որ Ան ցոյց տուաւ երբ խաչը ելաւ մեզի համար:

Այսօր գտի՛ր մէկը, որուն կրնաս յայտնել նման անձուրաց սէր մը:

Կրեցէ՛ք իրարու ծանրութիւնը, եւ այդպէս գործադրեցէ՛ք Քրիստոսի օրէնքը: - Գաղատացիս 6. 2

Չինացիներու Նոր Տարին՝ 2010-ին, կը զուգադիպի Արեւմտեան երկիրներու մէջ յիշատակուող «Մի-րահարներու Օր» (Վալընթայն) տօնին: Թէեւ այս տօները տարբեր ծագումներ ունին, սակայն, կան կարգ մը նմանութիւններ անոնց տօնակատարութեան ձեւերուն մէջ: Երկու տօներուն ալ սիրողներ նուէրներ կը փոխանակեն իրարու, իրենց սէրը յայտնելու համար: Վալընթայնի կարմիր վարթեր կը նուիրեն իրենց սիրած անձին, իսկ Չինական տօնին՝ դրամով լեցուն կարմիր ծրար մը՝ ընտանիքի անդամներուն եւ բարեկամներուն: Երկու պարագային ալ նուէրները սէր կը խորհրդանշեն:

Սահմանել Ձախողութիւնը

Կարդա՛
Եբրայեցիս 11. 24-34

Որո՞նք հաւատքով
պայքարեցան... եւ
տկարութեան գօրացան:
—Եբրայեցիս 11. 33, 34

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Ղեւտացուց 17-18
- Մատթէոս 27. 27-50

Հանքային արտադրութեան ծրագիրներով: Ան մեծ իրազործումներ կատարած էր նաեւ մարդասիրական մարզէն ներս: Սակայն, երբ սակարանը յանկարծ տագնապի մատնուեցաւ Հոկտ. 1929-ին, մարդիկ մոռնալով ամէն ինչ, սկսան յիշել զինք որպէս՝ 1930-ի տարիներու տնտեսական տագնապի պատասխանատու նախագահ:

Մէկ գլխաւոր ձախողութիւն չի նշանակեր, թէ մէկու մը կեանքը ամբողջութեամբ ձախողութիւն եղած է: Օրինակ, եթէ Աբրահամը յիշենք միայն իր սուտին համար (Ծննդ. 12. 10-20), կամ Մովսէսը՝ իր Աստուծոյ անհնազանդ ըլլալուն համար (Թուոց 20. 1-13), կամ Դաւիթ թագաւորը, որպէս մարդասպան (Բ. Թագ. 11)), մեր ըրածը արդար պիտի չըլլայ: Հակառակ իրենց մեղքերուն, անոնք կը ճանչցուին մարդիկ «որոնք հաւատքով... տկարութեան գօրացան» (Եբր. 13. 33-34): Մեր կեանքը ձախողութիւն մը չէ, եթէ զոջանք մեր մեղքերուն համար: Աստուած տակաւին կրնայ գործածել մեզ իրեն ծառայելու համար:

Միացեալ Նահանգներու մէջ տիրող Մեծ Ընկճուածութեան տարիներուն, շատեր կ'ապրէին փայտէ եւ թիթեղէ շինուած խրճիթներու մէջ: Այդ խղճալի բնակավայրերը կը կոչուէին Հոկվըրվիլ (Հոկվըրի բնակավայրեր), այն օրուայ նախագահ Հըրպըրթ Հոկվըրի անունով, զինք մեղադրելով որպէս պատճառ:

Սակայն, նախագահ Հոկվըրի տկարութիւնը, որպէս առաջնորդ խտտոր կը համեմատէր իր նախապէս արձանագրած առաջնորդի մեծ հմտութեան հետ: Անոր հմտութիւնը որպէս երկրաբան մեծ յաջողութիւն արձանագրած էր Աւստրալիայի եւ Չինաստանի մէջ՝ իր մշակած

**Յաջողութիւնը յանախ դուրս կու գայ
ձախողութեան մոխիրներէն**

Թոյները Երեւան Հանել

Կարդա՛
Գաղատացիս 1. 3-10

Կան ոմանք՝ որոնք կը
վրդովեն ձեզ, եւ
կ'ուզեն խեղաթիրել
Քրիստոսի Աւետարանը:
— Գաղատացիս 1. 7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ղեւտացոց 19-20

■ Մատթէոս 27. 51-66

րանը» քարոզելու գործին մէջ: Այն թոյնը կը նկատուէր այն սխալ սկզբունքը, թէ Աստուած կ'ընդունէր եւ արդար կը նկատէր բոլոր անոնց, որոնք կարգ մը հաստատուած օրէնքներու հնազանդութեամբ (յատկապէս թլփատութեան եւ պահեցողական օրէնքներ) զԱստուած հաճեցուցած կ'ըլլային: Այլ խօսքով, օրէնքին հնազանդիլը պայման էր, անջատ Յիսուսի վրայ ունենալիք հաւատքէն: Այդ սխալ ուսուցումը թունալի խանգարում մըն էր ճշմարտութեան, եւ Առաքեալը կը խնդրէր Գաղատացիներէն, որ զօրաւոր կերպով հակառակէին այդ ուսուցումին: Ան կը շեշտէ, թէ որեւէ Աւետարանի քարոզութիւն, որ հիմնուած չէ շնորհքի վրայ, Քրիստոսի վրայ ունեցած հաւատքի միջոցով, պէտք է «նզովեալ ըլլայ» (Գաղ. 1. 8-9):

Ուրեմն հաւատարմութեամբ սերտենք Աստուծոյ Խօսքը, կարենալ երեւան հանելու սխալ ուսուցումունքներու թոյները, եւ յայտարարելու ճշմարտութիւնը Աստուծոյ սքանչելի փրկութեան՝ Յիսուսի վրայ ունեցած մեր հաւատքով:

ԵՔԷ գիտնմք ճշմարտութիւնը, կրնանք գատորոշել սխալը:

Սէն Ֆրէնսիսքօ եւ Նիու Եօրք քաղաքները տեսակ մը ձուկ կը գործածեն, քննելու համար իրենց ջուրին մէջ որեւէ թունալի բանի մը գոյութիւնը, որ կրնայ խափանարարներու գործը ըլլալ, որպէս յարձակումի թիրախ: Փոքր թիւով այդ կապոյտ ձուկերը կը դրուին ջրամաններու մէջ՝ ջուրի յատակի ջրաբոյսերու հետ: Այդ ձուկերը, որ շատ զգայուն են որեւէ քիմիական նիւթի հանդէպ, շուտով կը մատնեն ջուրին անմաքուր ըլլալը:

Այդ ձուկերուն պէս, Առաքեալը կ'ուզէ, որ Գաղատացիները արթուն ըլլան եւ հակազդեն որեւէ թունալի խանգարումի, «Ճշմարիտ Աւետա-

րանը» քարոզելու գործին մէջ: Այն թոյնը կը նկատուէր այն սխալ սկզբունքը, թէ Աստուած կ'ընդունէր եւ արդար կը նկատէր բոլոր անոնց, որոնք կարգ մը հաստատուած օրէնքներու հնազանդութեամբ (յատկապէս թլփատութեան եւ պահեցողական օրէնքներ) զԱստուած հաճեցուցած կ'ըլլային: Այլ խօսքով, օրէնքին հնազանդիլը պայման էր, անջատ Յիսուսի վրայ ունենալիք հաւատքէն: Այդ սխալ ուսուցումը թունալի խանգարում մըն էր ճշմարտութեան, եւ Առաքեալը կը խնդրէր Գաղատացիներէն, որ զօրաւոր կերպով հակառակէին այդ ուսուցումին: Ան կը շեշտէ, թէ որեւէ Աւետարանի քարոզութիւն, որ հիմնուած չէ շնորհքի վրայ, Քրիստոսի վրայ ունեցած հաւատքի միջոցով, պէտք է «նզովեալ ըլլայ» (Գաղ. 1. 8-9):

Ուրեմն հաւատարմութեամբ սերտենք Աստուծոյ Խօսքը, կարենալ երեւան հանելու սխալ ուսուցումունքներու թոյները, եւ յայտարարելու ճշմարտութիւնը Աստուծոյ սքանչելի փրկութեան՝ Յիսուսի վրայ ունեցած մեր հաւատքով:

Ինքնաշարժը Լուալու Ընթացքին

Կարդա՛
Եսայի 43. 1-13

Երբ ջուրերէն անցնիս,
ես քեզի հետ պիտի
ըլլամ:
— Եսայի 43. 2

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դեկտեմբեր 21-22
- Մատթէոս 28

նօրէն մտածել, թէ Արդեօք ի՞նչ կրնար ըլլալ, եթէ այդտեղ բանտարկուած մնայի եւ ջուրը սկսէր ներս խոլժել: Յանկարծ ջուրը կեցաւ: Քիչ մը չորցնող հովերէ ետք, ինքնաշարժս դուրսի աշխարհի մէջն էր՝ մաքրուած եւ փայլուն:

Այս բոլորին մէջ յիշեցի կեանքիս երբեմնի փոթորկոտ ժամանակները, երբ ինծի կը թուար, թէ ես փոխատար գօտիի մը վրայ կը գտնուիմ, գոհ մըն եմ ոյժերու, որոնք իմ հակակշիռէս դուրս են: «Ինքնաշարժ լուալու փորձառուութիւն» կը կոչեմ զանոնք հիմա: Կը յիշեմ, թէ ամէն անգամ երբ խորունկ ջուրերէ անցած եմ, իմ Փրկիչս ինծի հետ եղած է պաշտպանելով զիս բարձրացող ալիքներուն դէմ (Եսայի 43. 2): Ամէն անգամ երբ ապահով դուրս եկած եմ միւս կողմէն, միշտ ուրախութեամբ եւ ինքնավստահ կրցած եմ ըսել. — «Ան հաւատարիմ Աստուած է»:

«Ինքնաշարժ լուալու» փորձառուութեան մէջ ես: Վստահէ՛ Աստուծոյ, որ քեզ ապահով դուրս բերէ միւս կողմէն: Ապա դուն պիտի ըլլաս փայլող վկայութիւն մը Իրեն համար:

**Փորձարկութեան փապուղի մը կրնայ դուրս
բերել փայլող վկայութիւն մը:**

Երբեք չեմ մոռնար առաջին փորձառութիւնս ինքնաշարժ լուալու ինքնագործ մեքենայի գործածութեան: Ատամնաբոյժի գացողի մը վախով մօտեցայ մեքենային, դրամը հրեցի ծակին մէջ, պրկուած ջիղերով ինքնաշարժիս պատուհանները վերատուգեցի, մօտեցուցի ինքնաշարժս գիծին եւ սպասեցի: Իմ հակակշիռէս դուրս ոյժեր, սկսան ինքնաշարժս դանդաղօրէն դէպի յառաջ տանիլ՝ գօտիով մը քաշուելու պէս: Ներսը կծկուած էի, երբ որոտագին սկսաւ ջուրի տարափը, օձառի փրփուրները եւ խոզանակներու քսուիլը ամէն կողմէ ինքնաշարժիս վրայ: Սկսայ անտրամաբանօրէն մտածել, թէ Արդեօք ի՞նչ կրնար ըլլալ, եթէ այդտեղ բանտարկուած մնայի եւ ջուրը սկսէր ներս խոլժել: Յանկարծ ջուրը կեցաւ: Քիչ մը չորցնող հովերէ ետք, ինքնաշարժս դուրսի աշխարհի մէջն էր՝ մաքրուած եւ փայլուն:

Պատմէ Ամէն Ինչ

Կարդա՛
Սաղմոս 62

Ամէն ժամանակ վստահեցէք Անոր, ո՛վ ժողովորդ, բացէ՛ք ձեր սիրտերը Անոր առջեւ, որովհետեւ Աստուած ապաւէն է մեզի:
—Սաղմոս 62. 8

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Ղեկապետ 23-24
- Մարկոս 1. 1-22

եսք այդ մեքենային, այլեւս պէտք չէր զգար այդ հարցերը բաժնեկցիլ իր կնոջ կամ ընտանիքի անդամներուն հետ:

Այս պարագան ինծի յիշեցուց, թէ որքան յաճախ ես անպետօրէն կը կրկնեմ իմ յուսախաբուած թիւններս եւ հարցերս ուրիշներու, փոխանակ զանոնք պատմելու Աստուծոյ: Սաղմոսերգուն կ'ըսէ. — «Ամէն ժամանակ վստահեցէք անոր, ո՛վ ժողովորդ, բացէ՛ք ձեր սիրտերը Անոր առջեւ, որովհետեւ Աստուած ապաւէն է մեզի» (Սաղմ. 62. 8): Ան երկու անգամ կը կրկնէ, թէ լուրթեամբ պիտի սպասէ Աստուծոյ, որովհետեւ Ան է իր վէմը եւ փրկութիւնը (Վ. 1-2, 5-7):

Անկասկած, կայ մեծ մխիթարութիւն մեր դժուարութիւնները մեր բարեկամներուն հետ բաժնեկցելու մէջ: Սակայն, մենք կորսնցուցած կ'ըլլանք մեծագոյն օգնութիւնը, եթէ զանոնք հաւատքով եւ աղօթքով չբերենք Աստուծոյ առջեւ:

Ուր որ ալ գտնուելու ըլլանք, Յիսուս միայն աղօթքի մը չափ հեռու է մեզմէ:

Եթէ Օրը...

Կարդա՛
Յակոբ 1. 1-11

Եղբայրներս, բոլորովին ուրախութիւն համարեցէ՛ք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ իյնաք, գիտնալով թէ ձեր հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ:

—Յակոբ 1. 2-3

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ղեկնացուց 25

■ Մարկոս 1. 23-45

կծու համը առած եղան Նացիական վայրագութեան գրեթէ բոլոր երեւոյթներուն»: Բանալի բառը այստեղ «գրեթէ» բառն է: Այս իմաստով «Եթէ Օրը» քաջարի փորձ մը եղած էր տեղեակ պահելու մարդոց՝ աշխարհի սպառնացող այն վտանգին եւ այն իրական չարչարանքներուն մասին, որ տարածուած էր ամբողջ Եւրոպա:

Իրական փորձանքները կեանքի «Եթէ»ներ չեն: Անոնք «Երբ»եր են: Իսկութեան մէջ կեանքի խորիմաստ դասերը կարելի չէ պարզապէս դիտել, անոնք պէտք է փորձարկութեան ենթարկուին, որպէսզի գլխացաւի եւ կորուստի այդ իրական եղանակներուն կարենանք կեանքին իրատեսութիւնը ունենալ եւ զգալ հաւատքի եւ Աստուծոյ անմիջական կարիքը: Այս առնչութեամբ Յակոբոս Առաքեալ կ'ըսէ.— «Եղբայրներս, բոլորովին ուրախութիւն համարեցէ՛ք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ իյնաք, գիտնալով, թէ ձեր հաւատքին փորձը համբերութիւն կը գործէ (Յակ. 1. 2-3):

Գ անատայի համար Փետրուար 19, 1942-ն սքանչելի օր մը եղած է: Ատիկա «Եթէ Օրը»ն էր - բեմադրութիւն մը Գերման Նացիներու կեղծ գրաւումին՝ Վուլֆհիլֆիլի ու Մանիթոպայի, Բ. Համաշխարհային Պատերազմի ընթացքին: Նպատակը ցոյց տալն էր, թէ ի՞նչ կրնար պատահիլ «Եթէ» Գանատան իյնար Նացի ոյժերու կոշտ եւ անգուլթ գրաւումին տակ եւ Գանատացիներ իրենց ամբողջական գորակցութիւնը ցոյց տային պատերազմին:

Ինչպէս մէկը նկարագրած էր դէպքը ըսելով.— «Եթէ Օրը տուն բերաւ իրողութիւնը Նացիներու գրաւումին: Մանիթոպայիներ շատ

Դժուարին ժամանակները կ'ուսուցանեն մեզի վստահութիւն:

Կարգ Առնել Արժամարար

Կարդա՛
ԹՈՒՆԳ 9. 19-23

Յուսալով սպասեցի
Տէրոջը: Ան ալ
հակեցաւ իմ կողմս եւ
լսեց աղաղակս:
—Սաղմոս 40. 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Դեկտեմբեր 26-27
■ Մարկոս 2

Կեանքս շարժումի մէջ զնելու ընթացքին մէջ, Հաւատալով որ Աստուած զիս շիտակ ուղղութեամբ պիտի առաջնորդէ: Շատ հետաքրքրական մտածում մըն է ասիկա, սակայն, Աստուած միշտ ալ այդ ձեւով չի գործեր: Երբեմն Աստուած կ'ուզէ որ կեցած մնանք «ժամանակի մը Համար»:

Ատեններ, երբ Մովսէս անապատին մէջ կը գտնուէր, Աստուած պահեց Իսրայէլի ժողովուրդը մէկտեղ: Ան առաջնորդեց զանոնք ամպի սիւնով մը, եւ երբ ամպը մէկտեղ կենար օրերով, «Իսրայէլի որդիները չէին մեկնել» (ԹՈՒՆԳ 9. 19): Սպասելը միշտ ալ դիւրին չէ, անոր Համար Աստուած կ'ուզէ որ մնանք այնտեղ, ճիշդ ուր ինք դրած է մեզ: Սաղմոսերգուն կ'ըսէ.— «Տէրոջ սպասէ, զօրացիր, ու քաջասիրտ եղիր, դարձեալ Տէրոջ սպասէ» (27. 14):

Երբ զգաս, թէ գետինը փակած ես եւ յառաջ չես երթար Աստուծոյ ծառայութեան գործիդ մէջ, բաց սիրտդ Աստուծոյ առաջնորդութեան: Ան պէտք եղած ատեն պիտի ըսէ՝ «Քալենք այս ուղղութեամբ»:

**Աստուած կը հրահանգէ մեր կեանքը եւ նոյնպէս
ալ մեր քալելը:**

Ինքնաշարժս տեղ մը կեցնելը միշտ դժուար եղած է ինծի Համար: Իսկութեան մէջ ինքնաշարժ վարել սորվեցնող ուսուցիչիս Համար առաջնահերթ բան մը չէր այդ: Անոր Համար, դէպի ետք քշելով ինքնաշարժը տեղ մը կանգնեցնելը տարիներ ետք միայն կրցած եմ սորվիլ: Նոյն էր պարագան զուգահեռական կեցնելու դասին: Տակաւին կը խուսափիմ այդ մէկը ընելէ:

Ասացուածք մը կայ, որ փորձած եմ Հասկնալ որպէս երիտասարդ Հաւատացեալ, բայց չեմ յաջողած.— «Աստուած չի կրնար ղեկավարել կանգ առած ինքնաշարժ մը»: Այս խօսքը որպէս կոչ մը նկատած եմ

Վազել Ծիսակ Ուղղութեամբ

Կարդա՛
Յովհաննու 6. 53-69

Սիմոն Պետրոս պատաս-
խանեց Անոր.- «Տէր,
որո՞ւն պիտի երթանք:
Դուն ունիս
յախտեցական կեանքի
խօսքեր:
-Յովհաննու 6. 68

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Թուոց 1-3
- Մարկոս 3

դառնութիւն եւ շփոթութիւն: Սակայն, երբ ոչ մէկ նման կեցուածք օգտակար եղած կամ իմաստ ունեցած էր, անոնք կապուած եւ կառչած մնացած էին Յիսուսի: Փոխանակ իրենց վիշտին մէջ լքելու Յիսուսը, այդ կիւնը եւ ընտանիքի մնացած անդամները, աւելի փառած էին Իրեն, որպէս միակ յոյսի եւ մխիթարութեան միջոց:

Ասիկա ինծի յիշեցուց աշակերտներուն Հակազդեցու-
թիւնը Յիսուսի խօսքերուն.- «Այս պատճառով իր աշա-
կերտներէն շատեր հեռացան, եւ ալ չէին քալեր իր հետ»
(Յովհ. 6. 67): Յիսուս գիտնալով անոնց տրամադրութիւնը
կը հարցնէ.- «Միթէ դո՞ւք ալ կ'ուզէք երթալ» (Հ. 68):
Պետրոս շիտակ հասկնալով կ'ըսէ.- «Տէր, որո՞ւն պիտի
երթանք, դուն ունիս յաւիտենական կեանքի խօսքեր» (Հ. 69):

Ինչ ալ դիմադրաւելու ըլլաս այսօր, քաջալերուէ
Պետրոսի ըսած խօսքերէն: Այնքան ատեն որ շիտակ
ուղղութեամբ կ'երթաս՝ դէպի Յիսուս, պիտի գտնես այն
չնորհքը եւ զօրութիւնը, որոնց պէտք ունիս:

**Երբ ամէն ինչ կորսնցնես, յիշէ թէ Յիսուսը չես
կորսնցուցած: Գնա՛ Իրեն:**

Ամենէն դժուար փորձառութենէս
մէկը, որ տարիներու ընթաց-
քին ունեցած եմ որպէս Հոգեւոր
Հովիւ, եկեղեցիիս անդամ կնոջ մը
ըսել էր, թէ իր ամուսինը, զաւակը
եւ կեսուր Հայրը՝ երեքն ալ
խեղդուած են նաւակի մը արկածի
պատճառով: Գիտէի որ այդ գոյժը
ամբողջութեամբ պիտի խորտակէր
իր կեանքը:

Այդ ողբերգական արկածին
յաջորդող օրերուն, շատ զարմացայ
եւ պէտք է ըսել Հիացայ, երբ տեսայ
այդ կիւնը եւ ընտանիքի մնացած
անդամները, արտասովոր Հաւատք
մը ցուցաբերեցին: Վստահաբար
անոնք ունեցած էին սրտաբեկում,

Կարճ_Ժամապահ

Կարդա՛
Հոովմայեցիս 5. 1-5

Յոյսը ամօթահար չընէր:
—Հոովմայեցիս 5. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՉ
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Թուոց 4-6

■ Մարկոս 4. 1-20

ներն ու վերադարձնելու իրենց տրուած գինուորական գոյքերը: Կը յիշեմ ուրախութեամբ հոս ու հոն դեգերիլս, պատասխանատուութիւններէ ազատ՝ գոհունակ սրտով: Թէեւ կարգ մը պարտականութիւններ ունէի, բայց ոչ մտահոգութիւններ, քանի որ գիտէի այլեւս տուն պիտի երթամ:

Հիմա որ «տարեց ժամապահ» մըն եմ, դարձեալ «կարճ ժամապահ» մըն եմ: Շատ երկար ժամանակ չէ մնացած ինծի այս վայրը ձգելու: Դարձեալ քայլերս ուրախութեամբ կ'առնեմ եւ հոգիս բարձր է եւ գոհունակ, որովհետեւ գիտեմ, թէ շատ չանցած տուն պիտի երթամ: Ահա այդ հեռանկարն էր, որ Յիսուս եւ իր աշակերտները կոչեցին «Յոյս» (Գործք 24. 15, Հոովմ. 5. 2-5):

Յոյս, աստուածաշնչական իմաստով կը նշանակէ վստահութիւն: Անիկա այդ հաստատ, անշարժ եւ անընկճելի հաւատքն է, թէ մեռնելէ ետք յարութիւն պիտի առնենք եւ պիտի երթանք մեր յաւիտեանական տունը: Եւ այդ բոլորը բաւարար են մեր հոգիները ուրախութեամբ լեցնելու:

**Յարուցեալ Քրիստոս պիտի գայ երկիմբէն,
իրենները երկիմբ տանելու համար:**

**Օտար
Պաշտամունք**

Կարդա՛
Գործք 17. 16-31

«Կը թուի թէ օտար
աստուածներու քարոզիչ
է», որովհետեւ
կ'աւետէր անոց
Յիսուսը եւ Անոր
յարութիւնը:
— Գործք 17. 18

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ

- Թուոց 7-8
- Մարկոս 4. 21-41

կու գայ ուսանելու, կը ծանօթանայ քրիստոնէութեան: Նախ անիկա իրեն կը թուի պարիկի մը պատմութեան պէս բան մը: Իրեն համար ատիկա օտար Աստուած մը պաշտելու պէս բան մըն էր (տես Գործք 17. 18):

Ապա, Քրիստոնեայ բարեկամ մը գինք կը հրաւիրէ իրենց տունը Ծնունդի առիթով: Այնտեղ Լի Թայ ականատես կ'ըլլայ քրիստոնեայ ընտանիքի մը միջնորդութիւն եւ կը լսէ Յիսուսի պատմութիւնը: Կը կարգայ Յովհ. 3-րդ գլուխը «վերստին ծնունդի» մասին եւ հարցումներ կը հարցնէ: Կը սկսի զգալ Սուրբ Հոգիին իր մէջ գործելը եւ ի վերջոյ կը գիտակցի, թէ քրիստոնէութիւնը ճշմարիտ էր եւ կ'ընդունի Քրիստոսը որպէս իր անձնական Տէրն ու Փրկիչը:

Երբ բարեկամ մը նայի քրիստոնէութեան որպէս օտար պաշտամունք, պէտք է յարգենք անոր կրօնական ժառանգութիւնը, մինչ կը խօսինք անոր Քրիստոնէութեան մասին: Ապա թոյլ տանք, որ Սուրբ Հոգին կատարէ իր գործը:

Մայրագոյն Արեւելք կատարած Շրջապտոյտի մը ընթացքին, այցելեցի արտասովոր սրբատեղի մը, ուր կային հարիւրաւոր արձաններ: Այդտեղ պաշտամունքի եկողներ, կ'ընտրէին այն արձանը, որ աւելի իրենց նախաձօր կը նմանի եւ անոր առջեւ կ'աղօթէին:

Մի քանի տարիներ առաջ, կարգացի Լի Թայ անունով աշակերտի մը մասին: Ան մեծ միսիթարութիւն գտած էր աղօթելով իր մահացած մեծ մօր: Քանի որ ան կ'աղօթէր մէկու մը, որուն ճանչցած էր եւ սիրած, իր ըրածը կը նկատէր շատ անձնական եւ անմիջական: Սակայն երբ Լի Թայ վիշխամէն Ամերիկա

Աստուած միակ նշմարիտ Աստուածն է:

Ըլլալով Իրական

Կարդա՛
Բ. Կորնթ. 6. 3-11

Ամէն բանի մէջ մեզ
մեզի կը հաստատենք,
որպէս Աստուծոյ
սպասարկուներ, շատ
համբերութեամբ,
տառապանքներու մէջ,
հարկադրանքներու եւ
տազնապներու:

—Բ. Կորնթ. 6. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՉ
ՏՈՐՈՒՆ ՄԷՉ

■ Թուոց 9-11

■ Մարկոս 5. 1-20

յօդուածագիր մը ակնարկելով քարդին կ'ըսէր:— «Թէեւ քարդը ճմրթկուած էր եւ քիչ մըն ալ գունաթափ, սակայն կարեւորը այն էր, որ ան իրական էր»:

Պօղոս Առաքեալ եւ իր ընկերակիցները շատ նեղութիւններ կրեցին Աւետարանին փրկութեան բարի լուրը տարածելու ընթացքին: Բ. Կորնթ. 6-րդ գլուխին մէջ ան կը թուէ իրենց արտաքին փորձութիւններն ու ներքին հոգեւոր զօրութեան աղբիւրները (Հ. 4-7): Երեւակայեցէք կացութիւնը, ուր այդ բոլոր հակազդեցութիւնները կը պատահէին – ծեծ/համբերութիւն, բանտ/ազնուութիւն, տառապանք/սէր:

Թէեւ ընկճուած Ֆիզիքսպէս, սպառած զգացումով եւ փորձուած հոգեւորապէս, բայց Քրիստոսի վրայ իրենց ունեցած հաւատքին վաւերականութիւնը յստակօրէն կը փայլի: «Տրտմածներու պէս՝ բայց միշտ կ'ուրախանանք, աղքատներու պէս՝ մինչդեռ տիրացած ենք ամէն բանի» (Հ. 10):

Քրիստոսի հետ քալելու մէջ, փոխանորդ չկայ հոգեւոր վաւերականութեամ իրական ըլլալուն:

Հնութիւններու առեւտրական մը, կը խորհի, թէ ճմրթկուած պէյսպոլի քարդը, որ գետնէն գտած էր, կրնար 10 տոլար արժել: Ծանուցանելէ ետք զայն համացանցին վրայ, կը սկսի մտածել, թէ արդեօք աւելի արժէք չունէ՞ր այդ: Կը վերցնէ ծանուցումը եւ ապա մասնագէտ արժեւորողի մը ցոյց կուտայ քարդը: Արժէւորողը կը հաստատէ, թէ քարդին ետեւ գտնուող նկարը կը կրէր 1869-ը թուականը, եւ ուրեմն այդ կը ներկայացնէր Սինսինէթի քաղաքի պէյսպոլի խումբը՝ որ առաջին կազմաւորուած խումբն էր Ամերիկայի մէջ: Քարդը կը ծախուի 75,000 տոլարի: Թերթի մը մէջ

Երեւակայել

Կարդա՛
Բ. Պետ. 1. 16-21

Ջանա՛ դուն քեզ
գնահատելի ցոյց տալ
Աստուծոյ առջեւ...
շիտակ բացատրելով
ճշմարտութեան Խօսքը:
—Բ. Տիմոթէոս 2. 15

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Թուոց 12-14
- Մարկոս 5. 21-43

Երբ ան տուն վերադարձաւ: Սակայն երբ աւելի մօտեցանք, անդրադարձանք, թէ մէկը իր աղտոտ պնակը հոն՝ սեղանին վրայ ձգած էր, իսկ մէջինը հաց չէր, այլ անուշեղէնի կտոր մը: Մեր երեւակայութիւնը մեզ խաբած էր:

Բաւական խնդացինք: Սակայն, վերջը սկսայ մտածել, թէ որքա՛ն յաճախ մեր երեւակայութիւնը մեզ ուրիշ տեղ կը տանի երբ կը կարդանք Աստուածաշունչը: Ենթադրելով թէ մեր եզրակացութիւնները շիտակ են, պէտք է արթուն ըլլանք եւ վստահ, թէ մեր մեկնաբանութիւնը կը յարմարի բնագրին՝ իր ամբողջութեան մէջ: Պետրոս Առաքեալ կ'ըսէ.՝ «Գիրքերուն ո՛չ մէկ մարգարէութիւնը ունի իր յատուկ մեկնութիւնը» (Բ. Պետ. 1. 20): Երբ վստահինք Սուրբ Հոգիին ուսուցումին, ուշադիր սերտենք եւ վստահինք վստահելի Սուրբ Գրոց ուսուցիչներու եւ հոգեւոր առաջնորդներու: Այն ատեն պիտի կարենանք խոսափիլ երեւակայելէ եւ տեսնելէ բաներ Աստուծոյ Խօսքին մէջ, որ իրականութեան մէջ հոն չեն:

Բճարան մը իր բովանդակութեանն անջատ մեկնաբանուած, յաճախ սխալ եզրակացութեան կը տանի:

Նոր Պայմաններու Տակ

Կարդա՛
Բ. Օրինաց 6. 1-9

Սիրէ՛ քու Տէր
Աստուածդ ամբողջ
սրտովդ, ամբողջ
անձովդ եւ ամբողջ
միտքովդ:
—Մատթէոս 22. 37

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Թուոց 15-16
■ Մարկոս 6. 1-29

Թէ տղան կրնայ բաւարար դրամ չուեննալ իր հետ: Ուրեմն կը վազէ դէպի դուռ: Սակայն, պահակը քաղաքավարօրէն կը կեցնէ զինք: Երբ ան կը պահանջէ ներս մտնել, պահակը թոյլ չտար: Մայրը կը տեսնէ տղան ներսը՝ կեցած դրան մօտ: Կը փորձէ բանալ դուռը «Ան զաւակս է» պողպով: Պահակը ազնուօրէն կը բռնէ կնկան ձեռքը եւ կ'ըսէ մեղմ ձայնով: «Գիտեմ տիկին, սակայն ան հիմա կը պատկանի երկրին: Ան նաւաստի է»:

Մենք ալ, երբ սկսինք հաւատալ Յիսուս Քրիստոսի եւ դառնալ իրեն հետեւորդ մը, նոր իշխանութեան տակ կը մտնենք: Մենք ենթակայ կը դառնանք նոր հրահանգներու: Հիմա մենք այլեւս կը պատկանինք Քրիստոսի: Այն բաները, որ ատեն մը կարելոր էին մեզի, կը կորսնցնեն իրենց արժէքը: Կը սկսինք արժեւորել իրերը տարբեր չափանիշով: Մեր նոր փափաքը կ'ըլլայ ամէն բանէ առաջ սիրել եւ ծառայել մեր Տէրոջ՝ մեր ամբողջ սրտով (Բ. Օրինաց 6. 5-6): Դուռն իր շարքերուն միացա՞ծ ես:

**Քրիստոսի հետեւորդներ իրենց քալելու
հրահանգը կը ստանան իրմէ:**

Հէրման Վուքի Համաշխարհային
Բ. Պատերազմի մասին գրած
Կայէնի Ապստամբութիւնը խորա-
գրով վէպը, գեղեցկօրէն կը ներկա-
յացնէ, թէ ի՞նչ կը պատահի, երբ
մէկը Աստուծոյ հետեւող մը ըլլայ:

Վէպին մէջ երիտասարդ մը, շատ
ազդեցիկ ընտանիքէ, զինուորա-
գրուած էր ծովային միաւորի մը
մէջ: Իր պաշտօնակոչութեան օրը,
մայրը իր շքեղ ինքնաշարժով կը
տանի զինք որոշուած վայրը եւ կը
համբուրէ «երթաք բարի» մաղթե-
լով: Մինչ շէնքէն ներս կը մտնէ,
տղան, պահակին ձեռքը կը թօթուէ,
եւ դուռը կը գոցուի իր ետեւէն:

Մայրը յանկարծ կը մտաբերէ,

Զօրութիւն Տկարութեան Մէջ

Կարդա՛
Մատթէոս 20. 20-28

Ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ
ըլլալ՝ անիկա ձեր սպա-
սարկուն թող ըլլայ:
—Մատթէոս 20. 26

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ
ՏԱՌՈՒՆ ՄԷՉ

■ Թուոց 17-19

■ Մարկոս 6. 30-56

որպէս արդիւնք, իսկական զօրութիւնը յաճախ կը նմանի տեսակ մը տկարութեան: Երբ Պօղոս Առաքեալ աղօթեց որ տկարութիւն մը իրմէ առնուի, Աստուած պատասխանեց ըսելով.— «Իմ շնորհքս կը բաւէ քեզի, որովհետեւ իմ զօրութիւնս կ'իրագործուի տկարութեան մէջ» (Բ. Կոր. 12. 9): Առաքեալը կը պատասխանէ սա նեղացնող խօսքով.— «Երբ տկար եմ, այն ատեն զօրաւոր եմ» (Հ. 10):

Յիսուսի երկրային ծառայութեան աւարտին, աշակերտներէն ոմանք կը մաքարէին փառասէր դիրքերու հասնելու: Յիսուս անոնց այդ տրամադրութիւնը օգտագործեց դաս մը ուսուցանելու, թէ իր թագաւորութեան մէջ հարցերը տարբեր են: Մեծութեան կը հասնինք երբ սիրայօժար կը ստանձնենք տկար դիրքերը (Մատթ. 20. 26): Ասիկա թշուարին ճշմարտութիւն մըն է: Ես կը նախընտրեմ զօրութեան պատրանքը՝ քան տկարութիւնը: Բայց Աստուած կ'ուզէ, որ անդրադառնանք, թէ ճշմարիտ զօրութիւնը կու գայ, երբ դադրինք մարդոց վրայ իշխելէ եւ սկսինք ծառայել անոնց:

**Աստուծոյ մեծագոյն զօրութիւնը կը
յայտնաբերուի մեր մեծագոյն տկարութեան մէջ:**

Ոչ ոք կ'ուզէ տկար ըլլալ: Ուրեմն, կը գտնենք ձեւեր զօրաւոր երեւալու համար: Ոմանք կը գործածեն զգացումներու զօրութիւնը ազդելու մարդոց վրայ: Ուրիշներ կը գործածեն անհատական զօրութիւնը իշխելու մարդոց կամքին վրայ: Իսկ ուրիշներ իմացական զօրութեամբ կը վախցնեն մարդոց: Թէեւ ասոնք կը ստեղծեն իրաւ զօրութեան մը պատրանքը, սակայն, ուրիշ բան չեն, եթէ ոչ տկարութեան նշաններ:

Երբ մենք իսկապէս զօրաւոր ենք, այն ատեն քաջութիւնը կ'ունենանք ընդունելու մեր սահմանափակութիւնը, եւ ճանչնալու մեր Աստուծմէ կախեալ ըլլալը: Եւ

Ծերութեան Շրջանը

Կարդա՛
Մարկոս 7. 1-3

Բայց եթէ մէկը չի
հոգար իրենցերը... (ան)
աւելի գէշ է՝ քան
անհաստ մը:
—Ա. Տիմոթէոս 5. 8

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷԿ
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Թուոց 20-22
■ Մարկոս 7. 1-13

պատահի: Սակայն, շատ մը մարդիկ կը թերանան տարեցներու հանդէպ իրենց ունեցած պատասխանատուութեանց մէջ: Յիսուսի ժամանակ, փարիսեցիներ գտած էին միջոց մը, խուսափելու համար իրենց ընտանեկան պարտաւորութիւններէն: Մարկոս 7. 9-13 հատուածին մէջ Յիսուս կը հանդիմանէ զանոնք՝ որովհետեւ աւանդական ձեւով իրենց նիւթական ստացուածքը կը նուիրէին Աստուծոյ (որպէս Կորբան (ընծայ) յայտարարելով, քան թէ գործածելու զանոնք՝ իրենց ծնողներուն հոգածութեան: Անոնց աւանդութիւնը պատճառ կ'ըլլար որ օրինազանց ըլլային իրենց ծնողքը պատուելու պատուէրին մէջ:

Մեր զաւակները, գործը եւ եկեղեցական գործունէութիւնները կրնան մեզ տարբեր ուղղութիւններու տանիլ: Սակայն, ատոնք իրաւունք չեն տար մեզի աննկատ ձգելու մեր տարեց ծնողներուն անմիջական կարիքները (Ա. Տիմ. 5. 8): Երբ մեր ծերութեան շրջանին հասնինք, յուսանք որ մեր զաւակներն ալ կը հետեւին մեր օրինակին:

Հեղինակ մը, իր Ուրիշ Երկիր գիրքին մէջ, կը խօսի եօթանասուն, ութսուն եւ ինիսուն տարիքին մէջ ապրող մարդոց հետ իր հանդիպումներուն մասին, որոնք շատ մը տեսակի կեանքի կացութիւններ կը դիմադրաւէին:

«Ես ուզեցի... հասկնալ մարդոց ծերութեան շրջանին մասին», կը գրէ ան: «Մենք չենք կազմակերպուած այնպիսի ձեւով մը, որ դիւրացնէ ծերութիւնը»: Հարցին արմատը, ան կը նկատէ, հին եւ նոր սերունդներու միջեւ գտնուող բաժանումն է, որ կը վնասէ երկու կողմերուն ալ:

Այս ընկերային երեւոյթը անպատճառ մտադրութեամբ չէ, որ կը

Մեր ծնողներուն յարգելը կրնանք սորվիլ մեր առջեւ եղող օրինակին նայելով: